

Շէնֆուշցի Յովհաննէսը (վարդապետ), անոր ծայրագոյն վարդապետութեան գաւազանը տալով՝ կը դրկէ իրեն տեղը, Շէնֆուշի վանքը: Յովհաննէս վարդապետ գալով կը կառավարէ աքոռը, եւ ինքը (Մինաս Ամթեցի) կը վախճանի Ս. Երուսաղէմի մէջ ու կը քաղուի Ս. Փրքկիչի մէջ, պատրիարքներու կարգին. ան ունի շատ ջանք ու երախտիք վանքիս վերայ եւ յիշատակ՝ զգեստներ եւ գիրքեր ու պղնձեղէններ»: (Անդ, էջ 458-59, քիւ 20), Յայսմաւուրք, Զնֆուշ):

Թորոս Աղբարի *Տեղինակ Գարեգին վրդ. Մրուանձտեանի* «անվարժ գրիչ» կոչած Տ. Մովսէսը երկոտանեակ մը տուցերու մէջ խոսուցած է Ամթեցու կեանքն ու գործը: Մեր Տ. Մովսէսին այս տողերը ուղիղ կը համեմատին Ամթեցու վերաբերեալ բազմաթիւ յիշատակարաններու եւ Օրագրութեան հետ, որոնցմէ սխալ հետեւութիւններ են հանած Հ. Ն. Ակինեան ու Ա. Ալոյսյանէան:

Իսկ հետեւեալը երկու տուններն են՝ իր ուսուցիչ Մարկոս վարդապետին ձօնած՝ Մինաս Ամթեցու 81 տուն ոտանաւորին, որուն խորագիրը՝ «Ի Մարկոս վարդապետն ասացեալ գովեստ բանի ի Մինասէ» կազմուած է ոտանաւորի առաջին 36 տուններու առաջին տողերուն սկզբնատուներէն.

«Իմ քաղաքս է Տիգրանակերտ,  
 Զոր այժմ անն ունա Համիր,  
 Իսկի չտեսաք ըգոն բարիդ,  
 Շէնֆուշ է մեզ բարեաց առիր:

Զի Բարուևոյն իմ վարդապետ.  
 Տէր Մարկոսին եմ աշակերտ,  
 Աստուածածին, Ս. Կարապետ<sup>2</sup>  
 Նոքա իսկ եմ ինձի վարպետ»:

(Հանդէս Ամս., 1960, Յուլիս-Սեպտ. քիւ 7-9)

2. Աստուածածինը անունն է Զնֆուշի վանքին, իսկ Ս. Կարապետը՝ գիւղաբազարի եկեղեցւոյն:
3. Տարոնցիկն է սա, Երուսաղէմի Պատրիարք 1645-1671:
4. Յիշուած բոլոր վարդապետները ամէնքն ալ եպիսկոպոսի եւ արքեպիսկոպոսի կարգ ունէին.

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆԻ ՍԵԱԼՆԵՐԸ

Թորոս Աղբար, Բ., *Ի միջի ալոց, ուրի Մինաս Ամթեցու հետեւեալ յիշատակարանը.* —

«Յիշեցէք Շէնֆուշցի Մարտիրոս վարդապետը եւ անոր աշակերտը Շէնֆուշցի Յովհաննէս վարդապետը, որ ուսուցիչն է երանիլի Աստուածատուրի<sup>3</sup>, Կիրակոսի, Եղիազար կաթողիկոսի եւ Մարկոս վարդապետներուն, որոնք Տիրոջ քով գնացեր են. ամէնէն ետքը (յիշեցէք) Յամթեցի Մինաս վարդապետս<sup>4</sup>, Ս. Տանարի քարզիչներու նուաստս, որ աշակերտն եմ վերոյիշեալ Շէնֆուշցի ուսուցչապետ Մարկոսի, որ Եղոկիա երբալու ատեն հանդիպեցանք աւազակներու, որոնք ամէն բաներս եւ գրքերս կողոպտեցին... զըրուեցաւ այս յիշատակարանը Հայոց ՌձԺԳ (1664) քուականին, երբ Երուսաղէմի Եղիազար վարդապետը կաթողիկոս ձեռնադրուեցաւ Հալէպ քաղաքին մէջ, Սոյ խաչատուր կաթողիկոսէն, Սբ. Քառասուն Մանկանց եկեղեցւոյ մէջ (Անդ, էջ 464-65, քիւ 31, Աւետարան, Զնֆուշ):

Հանդէս Ամսորեայի *վերոյիշեալ* (1960, ք. 7-9) թիւին մէջ, Հ. Ն. Ակինեան, առաջնորդող յօդուածով մը, 39 սիւնակ (19½ էջ) նուիրած է Մինաս Ամթեցու կենսագրականին, տարեկրթեան ձեւով, որ մէջբերելով վերելի յիշատակարանի վերջին հատուածը (Մինաս Ամթեցու կողոպտուելը Եղոկիոյ ճամբուն վերայ), կ'եղբակոչենէ. —

«1663/4ին (իմա՛ 1663ին կամ 1664ին) կ'երեւայ քէ Մինաս Եղոկիա փոխադրուած է» (Անդ, սիւն 322):

Բայց ինչո՞ւ, ի՞նչ նպատակով, Մինաս Ամթեցին պէտք է «փոխադրուած» ըլլայ Եղոկիա «1663/4ին»: Եթէ իբրեւ առաջ-

ոմանք եղած են պատրիարք եւ կաթողիկոս, ինչպէս ինքը՝ Մինաս Ամթեցին, որ այս տողերը գրած պահուն արքեպիսկոպոս էր, յետոյ եղաւ Պատրիարք: Եկատելի է վարդապետ ախոյոսի այստեղ, եւ այս յօդուածին բոլոր մէջբերումներուն մէջ, գործածութիւնը իր հարազատ եւ ինքնուրոյն՝ քարոզիչ իմաստով: